# ԱրՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԿԱՐԵՎՈՐՈՒՄ ԵՆ ԳԻՏԵԼԻՔԸ ԵՎ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՄՐՑԵԼ ԻՐԵՆՑ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՎ

*Արցախի պետական համալսարանի 50-ամյակի և ՀՀ անկախության տոնի առթիվ պատմության և իրավագիտության ֆակուլտետում կազմակերպվել է ինտելեկտուալ խաղ:*



Նախաձեռնությունը «Քաղաքագիտություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Լուսինե Օհանյանինն էր, ում խոսքով՝ խաղի նպատակն է զարգացնել ուսանողների ինտելեկտուալ մտածելակերպը, նպաստել նոր գիտելիքների ձեռքբերմանը, ներգրավել նրանց համալսարանական կյանքին և կազմակերպել արդյունավետ ժամանց:

«Նման միջոցառումները ոչ միայն ավելի հետաքրքիր ու բովանդակալից են դարձնում ուսանողական առօրյան, այլև հնարավորություն են տալիս բացահայտել և համախմբել համալսարանի խելացի և ակտիվ ուսանողներին»,- ասել է Լուսինե Օհանյանը:

Խաղի ընթացքում հնչել են տարբեր ոլորտների առնչվող տրամաբանական հարցեր:

Պատմության և իրավագիտության ֆակուլտետի ՈՒԽ նախագահ Աշխեն Ասրյանի խոսքով՝ վերջին տարիներին բուհում մեծ զարգացում են ապրում ուսանողական կյանքն ակտիվացնող բազմաբովանդակ միջոցառումները:

«Ուսանողն այսօր կարևորում է գիտելիքը և կարողանում է մրցել իր գիտելիքներով: Կազմակերպվող միջոցառումների առանցքային նպատակներից մեկը ուսանողին գիտելիք տալն է, ինչի լավագույն տարբերակներից է նաև նման խաղ-մրցույթների կազմակերպումը»,-ասել է նա:

Հաղթող թիմերը պարգևատրվել են պատվոգրերով:

# ՆՊԱՏԱԿԸ՝ ԽԹԱՆԵԼ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԺԱՄԱՆՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՎ ՀԵՏԱՔՐՔԻՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ




*Շարունակվում են ԱրՊՀ 50-ամյակին նվիրված միջոցառումները: Այս անգամ կազմակերպվել է ինտելեկտուալ խաղ, որին մասնակցում էին բնագիտական ֆակուլտետի տարբեր մասնագիտության ուսանողներ:*

Մրցույթը նախաձեռնել է բնագիտական ֆակուլտետի աշխարհագրության ամբիոնի դասախոս Ռուբինա Թովմասյանը:

«Նման միջոցառումները նպաստում են մասնակիցների մտավոր կարողությունների, մտածողության զարգացմանը, գիտելիքի նկատմամբ ձևավորում են դրական վերաբերմունք, ինչպես նաև ընդլայնում հետաքրքրությունների շրջանակը»,-ասել է նա:

Մրցույթի ընթացքում հնչել են ուսանողների իմացական գիտելիքները ստուգող հարցեր տարբեր ոլորտներից: Նպատակն էր խթանել ուսանողական ժամանցի արդյունավետ և հետաքրքիր կազմակերպմանը:

Հաղթող թիմը պարգևատրվել է պատվոգրով:



«Քո ժամանակը»

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Խմբագիր՝ Ձ.ՍԱՌԱՋՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Էլինա ՀԱԿՈԲՅԱՆ, լրագրություն 3-րդ կուրս

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91



Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդությանը:
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

Քո ժամանակը

№ 5
ՍԵՊՏԵՄԲԵՐ
2019

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

# ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԵԿՆԱՐԿԻ ԱՌԹԻՎ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ ԵՆ ՀՂՈՒՄ ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ



*-Սիրելի՛ առաջին կուրսեցիներ, շնորհավորում ենք «ԱրՊՀ ուսանող» պատվավոր կոչումը ստանձնելու և նոր ուսումնական տարվա կապակցությամբ: Ձեր առաջին ուսանողական տարին թող լինի միայն ու միայն առաջընթացների, ստեղծագործական նվաճումների ու նորանոր ձեռքբերումների տարի:*

*Վստահորեն կարող եմ ասել, որ ձեր բոլոր սպասելիքները կարդարացվեն, դեռ ավելին, ԱրՊՀ-ն ձեզ կտա հնարավորությունների լայն հարթակ, գիտելիքների անսահման պաշար և անմոռանալի ուսանողական օրեր: Որպես ավարտական կուրսի ուսանողուհի՝ բարի նախանձով եմ նայում ձեր առաջին քայլերին, ուսման մեջ մաղթում եմ եռանդ ու անմնացորդ նվիրում: Թող այդ եռանդն ու աշխատասիրությունը հաջողություն բերեն բոլորիդ: Չկա լավ և վատ մասնագիտություն. կա լավ և վատ մասնագետ, ուստի գիտելիքի յուրացման հարցում նախանձախնդիր ու հետևողական եղեք, քանզի մեր երկրի լուսավոր ապագան միայն մեզնից է կախված:*

***Լիլիթ Մարգարյան,***
***Հայոց լեզու և գրակ. 4-րդ կուրս***

* * *

*-Առաջին դասարանցիների նման ուրախ, անհանգիստ, անհամբեր սպասում էի սեպտեմբերին, չէ՞ որ ես էլ եմ առաջին, ուղղակի՝ կուրսեցի: Չափահաս համարվող մարդու կյանքն անճանաչելիորեն փոխվում է, երբ նա դառնում է ուսանող: Նոր ընկերներ՝ համակուրսեցիների խառնամբոխում, անհասկանալի առարկաներ, որոնք օր օրի կդառնան ավելի հարազատ ու հետաքրքիր: Այստեղ հասկանում ես, որ նորանոր բարձունքներ նվաճելու համար հույսդ պետք է դնես միայն քո սեփական համառության և ջանասիրության վրա: Շնորհավորում եմ բոլորիս:*



***Մարիամ Յուզբաշյան,***
***Ֆինանսներ 1-ին կուրս***

* * *



*- Սիրելի՛ առաջին կուրսեցիներ, ջերմորեն շնորհավորում եմ ձեզ մայր բուհ ընդունվելու և ձեր նպատակին ևս մեկ քայլով մոտենալու կապակցությամբ: Մաղթում եմ, որ այս տարիները, ձեզ տրված ժամանակն ու հնարավորությունները ճիշտ օգտագործեք: Տարիներ հետո կհասկանաք, որ սրանք ձեր կյանքի լավագույն և գեղեցիկ տարիներն են՝ թե՛ գիտելիքներ ձեռքբերելու, թե հիշարժան կյանք ունենալու համար: Համոզված եղեք, որ Արցախի պետական համալսարանի ամբողջ պրոֆեսորադասախոսական կազմը, համալսարանի ձեր ավագ կուրսեցիները ամեն ինչ կանեն, որ դուք ստանաք որակյալ կրթություն, բայց դուք էլ պետք է կարողանաք ձեզ տրված առիթը ճիշտ օգտագործել, փոխհատուցել ձեր ծնողների ներդրումը, որոնք այս դժվարին պայմաններում ձեզ կրթության են տալիս, իսկ ձեր փոխհատուցումը կլինի այն, որ դուք դառնաք լավ մասնագետներ: Հիշեք, գիտելիքը միակ բանն է, որ կյանքի ոչ մի իրավիճակում ոչ ոք չի կարող ձեզնից վերցնել: Բարի գալուստ մեր մեծ ընտանիք:*

***Աննա Ահարոնյան,***
***Լրագրություն, 4-րդ կուրս***



-Նոր ուսումնական տարի, նոր իղձեր ու երազանքներ, սպասելիքներ ու նպատակներ:

Սիրելի ուսանողնե՛ր, սրտանց շնորհավորում եմ բոլորիդ այս առիթով, մանավանդ մեզ՝ նորեկներիս, որ մենք էլ դարձանք «ուսանող» կոչման կրողներ: Ցանկանում եմ, որ բոլորս հասնենք այն ամենին, ինչի համար եկել ենք: Իսկ մեր նպատակը միայն մեկն է՝ կրթվել և միշտ հավատարիմ մնալ մարդկային վեհ կոչմանը:

**Լինա Միրզոյան,**
**Հ. լեզու և գրակ, 1-ին կուրս**

* * *

- Ուսանողական տարիները մարդու կյանքում ամենաակտիվ և ամենահետաքրքիր ժամանակաշրջանն են: Հենց այս շրջանում ենք գիտակցում, թե որն է կյանքում մեր նպատակը և ինչպես ենք պատկերացնում մեր ապագան: Տեղափոխվելով դպրոցից համալսարան՝ թվում է՝ չես կարող համակերպվել այդ մեծ փոփոխությանը: Ճիշտ է, սկզբնական շրջանում մի քիչ դժվար է, բայց մենք պետք է հաղթահարենք այդ դժվարությունները՝ լսարանի փնտրտուքները, ռեժիմին հարմարվելու փորձերը և այլն: Մաղթում եմ բոլոր ուսանողներին հաջողություններ ուսման բնագավառում, լուրջ մոտեցումներ ցուցաբերել գիտելիքների ձեռքբերման հարցում և իհարկե ակտիվ և հետաքրքիր անցկացնել ուսանողական առօրյան:



**Ռոմելա Թամրազյան,**
**Ֆինանսներ, 1-ին կուրս**

* * *

- Գիտելիքը հզոր ուժ է, որը մշտապես օգնում է մարդուն հարստացնել ու սնուցել իր միտքն ու հոգին: Կրթված ու իր մասնագիտությանը լիարժեք տիրապետող մարդն, անշուշտ, գտնում է իր ճիշտ տեղն ու դիրքը կյանքում: Ես նույնպես շնորհավորում եմ բոլորիս նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ և մաղթում բոլոր ուսանողներին մեծ հաջողություններ իրենց ընտրած ոլորտներում: Թող այս նոր ուսումնական տարին լինի առավել հագեցած ու արդյունավետ, լինի նոր նվաճումների ու ձեռքբերումների տարի: Մաղթում եմ, որ բոլորս միասին զինվենք նոր գիտելիքներով, դառնանք ավելի ուժեղ և համարձակ, քանզի գիտելիքն իսկապես ուժ է: Մեր ապագան կախված է յուրաքանչյուրիս հետևողական աշխատանքից ու նվիրումից: Բարի ուսումնական տարի բոլորիս:



**Էլինա Հակոբյան,**
**Լրագրություն, 3-րդ կուրս**

* * *

-Շնորհավորում եմ բոլոր դասախոսներին և ուսանողներին նոր ուսումնական մեկնարկի կապակցությամբ և ցանկանում հաստատուն կամք, հաջողություններ ուսման մեջ և համարձակ ձեռնարկումներ՝ ի նպաստ մեր երկրի և հասարակության: Լինելով 4-րդ կուրսի ուսանողուհի՝ հորդորում եմ մեր առաջին կուրսեցիներին լավագույնս օգտագործել ներկայիս հնարավորությունները, ձեռք բերել շատ գիտելիքներ, մասնակցել ուսանողական կյանքի ակտիվացմանը:



**Սոֆյա Ասրյան,**
**ֆինանսներ, 4-րդ կուրս**

**Պատրաստեց**
**Էլինա ՀԱԿՈԲՅԱՆԸ**



# ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

***Արցախի պետական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի «Իրավագիտություն» մասնագիտության 1–ին կուրսի ուսանողները հայրենաճանաչողական այց կատարեցին մշակութային քաղաք Շուշի՝ շրջելով քաղաքի թանգարաններում և տեսարժան վայրերում:***

Նախաձեռնության հեղինակը կուրսղեկ Ս. Զաքարյանն էր, ով, կարևորելով նմանատիպ միջոցառումները, նշել է, որ ուսումնական տարվա ընթացքում նախատեսված է իրականացնել մի շարք ծրագրեր, որոնք ուսումնական գործընթացը կդարձնեն ավելի հետաքրքիր ու բազմաբովանդակ:

«Յուրաքանչյուր դասընթաց մասնագիտական գիտելիքներից բացի պետք է հագեցած լինի նաև հայրենաճանաչողությամբ, հայրենասիրությամբ: Մեր նպատակն է ուսանողների հետ այսպիսի միջոցառումներով բացահայտել մեր հայրենիքի յուրաքանչյուր հատված, որը ևս յուրահատուկ դաս է»,-ընդգծել է նա:



Ուսանողները գոհունակություն են հայտնել հայրենաճանաչողական այցից ստացած դասերից և նշել նմանատիպ միջոցառումները պարբերաբար կազմակերպելու անհրաժեշտությունը:

# ԿՈՒՐՍՂԵԿԻ ԺԱՄԸ՝ Ի ՆՊԱՍՏ «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ» ԶԱՐԳԱՑՄԱՆ



***ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի աշխարհագրության, կենսաբանության, քիմիայի և ֆիզիկայի առաջին կուրսեցիների կուրսղեկի ժամն անցկացվեց օզոնի շերտի պահպանության միջազգային օրվա խորհրդին համահունչ: Դաս-միջոցառումը վարում էր կուրսղեկ, աշխարհագրության դասախոս Ռուբինա Թովմասյանը:***

Ցուցադրվեց փաստագրական կարճամետրաժ ֆիլմ, որտեղ ներկայացված է ոչ միայն խնդրի էությունը, այլև օզոնի շերտի վերականգնման ուղղությամբ աշխարհում իրականացված միջոցառումների տեսանելի արդյունքները:

«Գլխավոր նպատակը ևս մեկ անգամ և՛ նշված խնդրի, և՛ էկոլոգիական բնույթի բազմաթիվ այլ խնդիրների լուծման հրատապությունն ընդգծելն էր:Նման միջոցառումները փոքրիկ քայլ են «էկոլոգիական գրագիտությունը» զարգացնելու ուղղությամբ»,-նշել է Ռ. Թովմասյանը:

*Իմ հայրենիքի անպարտ լեռները*
*Թիկունք էին մեզ, հենարան հզոր,*
*Ափսո՜ս, նրանք էլ մնացին անտեր՝*
*Հայր լեռը չկա՜…*

*Իմ հայրենիքի գետերը վարար*
*Քրքջում էին ջրերով անպիղծ.*
*Ափսո՜ս, նրանք էլ մնացին անտեր՝*
*Մայր գետը դարձավ լո՜կ սահմանագիծ…*

*Իմ հայրենիքի հրկիզված հոգում*
*Խաչքարերն էին անբառ աղոթում,*
*Մինչև որ…հանգա՜ն, մարվեցին լռին…*

*Իմ հայրենիքի թախծոտ աչքերում*
*Կարոտ կա անսպառ,*
*Դեպի սուրբ Մասիս, դեպի կորսված հողերը հայոց…*



*Անսպառ կարոտ կա թախծոտ աչքերում:*
*Իմ հայրենիքի տրորված սրտում*
*Ոտնակոխ եղած երազներ բազում,*
*Միացման անուրջ՝ տրորված սրտում:*

*Բայց հայրենիքիս փայլուն ճակատին*
*Կյանքի հույսեր կան, կյանքի լույսեր կան,*
*Որոնք երկա՜ր են վառված մնալու…*

**Լիանա ՄՈՎՍԵՍՅԱՆ**
**Հայոց լեզու և գրակ. 2-րդ կուրս**

# ԳԻՏԵԼԻՔՆ ԱՆԳՆԱՀԱՏԵԼԻ ԱՐԺԵՔ Է




***Նոր ուսումնական տարին արդեն իր լիազորությունների մեջ է: Ի՞նչ նշանակություն ունի գիտելիքը, համալսարանական կրթությունը ժամանակակից ուսանողի համար, ինչպիսի՞ սպասելիքներ ունեն ուսանողները նոր ուսումնականից: Այս և հարակից այլ հարցերի շուրջ զրուցում ենք հայոց լեզու և գրականություն 3-րդ կուրսի ուսանողուհի Լիլիանա Հայրիյանի հետ:***

***-Քո կարծիքով ի՞նչ է գիտելիքը, ի՞նչ ուժ և ներգործություն ունի այն մարդու վարքագծի ու ապագայի վրա:***

*-Ես կցանկանայի այս հարցին պատասխանել Գորկու հետևյալ խոսքերով. «Չկա ավելի հզոր ուժ, քան գիտելիքը. գիտելիքներով զինված մարդը անպարտելի է»: Այն մարդուն ուժ է տալիս հակադրվելու չարին ու անարդարությանը: Մշտապես պետք է հիշել, որ ամենահամարձակ մարդը վախկոտ է դառնում, երբ նա չունի հաստատուն հայացքներ ու գիտելիքներ:*

***-3-րդ կուրսի ուսանողուհին ի՞նչ սպասումներ ունի նոր ուսումնական տարուց:***

*-Նպատակ ունեմ առավել արդյունավետ օգտագործել ուսումնական այս տարին մասնագիտական գիտելիքների խորացման և նորանոր հաջողություններ գրանցելու համար: Հուսով եմ, որ կտրվեն հետաքրքիր ու օգտակար դասընթացների մասնակցելու հնարավորություններ:*

***-Լիլիանա, կարո՞ղ ես հակիրճ ներկայացնել քո ուսանողական տարիների ձեռքբերումները:***

*-Կարծես թե հաջողվել է դրական արդյունքներ կամ առաջադիմություն ապահովել ուսման և հասարակական ակտիվության ոլորտներում: Համալսարանը ոչ միայն գիտելիքների, այլև հմտությունների ձեռքբերման միջավայր է, ուստի ձգտում եմ բաց չթողնել դրանք զարգացնելու հնարավորությունը:*

***-Ըստ քեզ՝ ինչպիսի՞ առավելություններ ու հնարավորություններ ունեն ԱրՊՀ ուսանողները:***

*-Առաջին կարևորագույն առավելությունն այն է, որ մենք ստանում ենք անհրաժեշտ գիտելիքներ՝ ապագայում պահանջված մասնագետ դառնալու համար: Արցախի մայր բուհը համագործակցում է այլ համալսարանների հետ և ընձեռում է հնարավորություն՝ մասնակցելու դասընթացների, գիտաժողովների ինչպես Արցախում, այնպես էլ Հայաստանում և արտերկրում: Անցած տարի մասնակցել եմ ռուս-հայկական համալսարանում կազմակերպված ուսանողական գիտաժողովին և վերադարձել հարուստ փորձով և անմոռանալի հիշողություններով: Նմանատիպ միջոցառումները երիտասարդներին դարձնում են ավելի անկաշկանդ, համարձակ և առանց բարդույթների: Մերօրյա երիտասարդը պետք է կարողանա արտահայտել իր կարծիքը, ձևակերպել իր ցանկությունները և չվախենալ դրանց մասին բարձրաձայնել: Իմ կարծիքով՝ այս ամենի համար մեր համալսարանում ստեղծված են անհրաժեշտ պայմաններ:*

***-Ո՞վ է դասախոսի քո իդեալը:***

*-Դասախոսի իմ իդեալը կիրթ, հետաքրքիր, նորարար և համարձակ մասնագետն է: Միշտ սիրել եմ խարիզմատիկ ու վառ անհատականությունների, ուստի այս երկու հատկանիշները ևս կարևորում եմ:*

***-Ի՞նչ կմաղթեիր կամ ի՞նչ խորհուրդ կտայիր առաջին կուրսեցիներին, որոնք դեռ նոր են անցնելու այն ճանապարհով, որի կեսը դու արդեն անցել ես:***

*-Առաջին կուրսեցիները մշտապես պետք է հիշեն, որ, ճիշտ է, գիտելիքն անգնահատելի արժեք է, սակայն ուսանողական կյանքը միայն լսարանով, սովորելով ու դասախոսություններով չի սահմանափակվում: Ուսանողական կյանքը ավելի հետաքրքիր ու բովանդակալից է դառնում նաև ներբուհական տարբեր միջոցառումներով, որոնց նախաձեռնողներից մեկն էլ տվյալ բուհի ուսանողը պետք է լինի: Եղեք ազնիվ, նպատակասլաց ու բարեխիղճ, և ձեր հաջողությունները կլինեն շարունակական:*

*Հարցազրույցը՝ Նանե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ*
***Լրագրություն 3-րդ կուրս***

# ՊԱՏՄԱՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑ ԴԵՊԻ ԳՏՉԱՎԱՆՔ



***Սեպտեմբերի 29-ին ԱրՊՀ «Պատմություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողները, պ.գ.թ., դոցենտ Նունե Սարումյանի և ավագ դասախոս Իսկուհի Ավանեսյանի գլխավորությամբ, պատմաճանաչողական այց կատարեցին դեպի Գտչավանք:***

Գտչավանք միջնադարյան վանական համալիրը գտնվում է Արցախի Հանրապետության Հադրութի շրջանի Տող գյուղի մոտ: Տողասարի կամ ճգնավորի լեռան հյուսիսարևմտյան լանջի գոգավորությունում՝ թավուտ անտառների մեջ դեռ շատ հեռվից երևում է նշանավոր Գտչավանքի գմբեթը: Ուսանողները շրջեցին համալիրի տարածքում, դասախոսների կողմից լսեցին դասախոսություն:

Օրը հագեցած էր հետաքրքիր տպավորություններով, հայրենաճանաչողական իմացություններով: Ուսանողները, կարևորելով նման պատմաճանաչողական էքսկուրսիաները, նշում են, որ այդպիսիք յուրահատուկ դաս են, որոնք անհրաժեշտ են համալսարանական կյանքը ավելի հետաքրքիր ու արդյունավետ դարձնելու առումով:

*Աշխեն Ասրյան,*
***պատմ. և իրավագ. ֆակ. ուսխորհրդի նախագահ***



# ՍԻՐԻՐ ԿՅԱՆՔԸ

***Կարծես իրար հաջորդող սովորական երեկոներից էր՝ խաղաղ և իր մեջ ոչ մի արտասովոր բան չպարունակող: Կարծես օրն ավարտվում էր իրեն հատուկ պարզ ու հասարակ կերպով: Սակայն ամեն ինչ թվացյալ էր:***

Նա մենակ էր խավարի մեջ թաքախված, լռության միջից բղավող քարե պատերով այդ սենյակում, ուր ամեն ինչ վաղուց առաջվանը չէր: Այստեղ պատերն են հոգնել տաքացնելուց, պատուհանները լուսավորելուց...

Նա թույլ էր շատ ու անպաշտպան, նա խոցված էր ու վախեցած: Ֆիզիկապես սենյակում էր, բայց բացակայում էր մտովի: Ամենաուժեղ բանը, որ ազդում է մեր հոգեկանի և նույնիսկ ֆիզիկականի վրա, վերացական է. մենք այն նյութականի պես բռնել կամ բաց թողնել չենք կարող:

Մեր մտքերը... ահա թե ինչը կարող է մեզ հասցնել հաջողության և հակառակը՝ կործանման:

Նա մենակ էր, բացարձակապես մենակ: Եվ գուցե հենց այդ մենակությունն էր, որ նրան ստիպեց այդպես սուզվել իր մտքերի խորը օվկիանում: Շփոթված էր նա, ցնորված կարծես, պոկված տերևի պես ընկած, մոռացված: Իսկ նրա մտքերն ահա սավառնում էին դեպի անհաս հեռու-հեռուներ...

Եվ ահա մի լույս իջավ իր երեսին:

-Երբևէ աչքերդ փակել և փորձե՞լ ես զգալ առանց տեսնելու, միայն լսելով կամ գուցե առանց: Երբևէ փորձե՞լ ես լռել այն պահին, երբ պետք է խոսես, լացես կամ գոռաս, հանգիստ մնալ, երբ պետք է գործես: Երբևէ փորձե՞լ ես ուղղակի ԶԳԱԼ, զգալ, որ ԱՊՐՈՒՄ ես: Երբ դու մտածես, որ կգա մի օր, ու կմնա մի օր, դու կզգաս քո ապրած յուրաքանչյուր պահը, դու կգնահատես, կապրես և կապրեցնես:

Դու կսկսես մթության մեջ տեսնել այնպիսի բաներ, որոնք անհասանելի են որոշների համար: Մանրուքները նկատելուն զուգահեռ խոշորագույնները կարող են վրիպել քո աչքից:

Դու կարող ես սեր ստանալ, բայց չտալ փոխադարձ և դրանով հանդերձ ներսումդ դատարկություն զգալ: Բայց, երբ փորձես տալ, չպահանջել, քո լիությամբ դու կվարակես քո մտերիմներին:

Դու կարող ես ժպիտ պարգևել, քո անարատ սիրով պարուրել մեկին, քո ձայնով նրա հոգին ջերմացնել և մի քնքուշ խոսքով թև տալ, որ թռչի:

Սիրվելուց քաղցր է սիրելը, ճակատագրից շնորհակալ լինել այդ գեղեցիկ զգացմունքին մոտիկից ծանոթ լինելու, նրան քո ողջ հոգով ու մտքով զգալու համար, կարոտել ինչ-որ մեկին ու սրտի թրթիռով սպասել նրան, նրա համար աղոթել ու գովել նրան, զգալ, որ ապրում ես, որ քո կյանքի մռայլ այս օրից այն կողմ մի օր է սպասվում քեզ, մի հեքիաթային ու աներևակայելի օր, բոլոր ժամանակների մեջ անկրկնելի...



Նրա մենախոսությունը շատ երկար տևեց, սակայն որպես պատասխան տիրում էր քար լռություն: Նա զգում էր, որ մենակ չէ, բայց կողքինն իր համար համբերատար լսող է, այլ ոչ թե շաղակրատ մի զրուցընկեր: Բայց դա նրա համար արգելք չէր, նա շարունակում էր իր մտերմիկ, շատ հուզիչ զրույցը: Խոսեց նա, խոսեց, ժամ, թե երկու և ավելի ու քնեց: Իսկ լույսն իր դեմքից կամաց հեռացավ՝ կարծես մարդկային հետքեր թողնելով...

-Կա՛նգ առ, մտածի՛ր, չե՞ս տեսնում քեզ այդ կնոջ կերպարում: Քեզ ծանոթ չե՞ն նրա ապրումներն ու հույզերը, դու նրա պես չե՞ս դիմել Արարչին...

Օրերը դառնում են շաբաթներ, շաբաթներն՝ ամիսներ, ամիսները՝ տարիներ և այդպես շարունակ: Մարդիկ փոխվում են, փոխում կյանքի որակն ու արագացնում նրա ընթացքը: Նրանք զբաղված են լինում մշտապես և քիչ ժամանակ ունենում մտերիմների հետ անցկացնելու համար: Ոմանք էլ շփվում են, շփվում, բայց իրական քաղցրությունն, ավաղ, չեն զգում: Կան մարդիկ, ովքեր իրենց ժամանակն անց են կացնում շփվելով մտերիմների հետ՝ թե՛ իրական կյանքում, թե՛ վիրտուալ: Եվ մտածում ես՝ նա կարոտել նույնիսկ չի հասցնում: Ո՛չ, դու սխալվում ես: Նրա հոգու մի մութ անկյունում դատարկություն է տիրում, մի անգութ դատարկություն, որ բղավում և խլացնում է նրան՝ դրդելով մտքերով սավառնել անհայտ հեռուներ: Նա փորձում է գտնել մեկին, ով կարող է կիսել իր հոգու ու մտքի մենակությունը...

Կա՛նգ առ, մտածի՛ր, զգու՞մ ես՝ քո շուրջ կատարվող ամեն ինչ գալիս է քո ներսից ու մտքերից: Դու տեսնում ես այն, ինչ պատկերացրել էիր մի օր, դու կորցնում ես այն, ինչ չես նկատել մինչ այս:

Եվ, եթե լավ ընկեր գտնելու համար ինքդ պետք է լինես լավ ընկեր, ապա կիսիր դիմացինիդ մենակությունն այնպես, որ մի օր հանկարծ այն իր թևերի տակ չառնի քեզ տրված այդքան քաղցր կյանքը: Սիրիր կյանքը, որ սիրվես նրա կողմից:

***Անի ԱԶԱՏՅԱՆ,***
***անգլերեն լեզու և գրակ. 3-րդ կուրս***

# «ԻՆՁ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԷՐ ՏՐՎԱԾ ՄԵԿՆԵԼ ՄՈՍԿՎԱ, ՍԱԿԱՅՆ ԻՆՁ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈՐ ԷՐ ՄՆԱԼ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ…»



***Ամեն տարի Արցախի պետական համալսարան դիմում-հայտ են ներկայացնում դպրոցն ավարտած բազմաթիվ շրջանավարտներ, ովքեր ցանկանում են կրթություն ստանալ մայր բուհում: Նրանց թվում է նաև Մոնիկա Օհանջանյանը, ով սովորում է բանասիրական ֆակուլտետի «Լրագրություն» մասնագիտության առաջին կուրսում: Հարցազրույցի միջոցով կփորձենք պարզել նրա ընդունակություններն ու նախասիրությունները և, թե ինչու է բոլոր մասնագիտություններից ընտրել հենց լրագրողի մասնագիտությունը:***

***-Մոնիկա, ինչու՞ ընտրեցիր հենց «Լրագրություն» մասնագիտությունը:***

-Իմ մանկության ամենամեծ երազանքներից մեկն էր դառնալ լրագրող և աշխատել հեռուստատեսությունում: Սիրեցի լրագրությունը, քանի որ ես ինձ պատկերացնում եմ հենց այդ բնագավառում ու, համոզված եմ, որ ճիշտ ընտրություն եմ կատարել:

***-Ինչու՞ որոշեցիր կրթությունդ շարունակել Արցախի պետական համալսարանում, այլ ոչ մեկ այլ բուհում:***

-Ինձ հնարավորություն էր տրված մեկնել Մոսկվա, սակայն ինձ համար կարևոր էր մնալ իմ հայրենիքում, և ես համոզված էի, որ, մնալով իմ հարազատ բնօրրանում, որակյալ կրթություն կստանամ: Բացի այդ, գիտեի, որ մեր համալսարանի դասախոսական անձնակազմը ցուցաբերում է բարեհամբույր վերաբերմունք յուրաքանչյուր ուսանողի նկատմամբ: Ես առաջին իսկ օրվանից ինձ զգում եմ ջերմ ու հարազատ միջավայրում: Բավարարված եմ զգում նաև մեր դասախոսների տված գիտելիքներից՝ միաժամանակ կարևորելով նաև ինքնակրթության անհրաժեշտությունը: Կարևոր պայման է նաև այն, որ դասախոսները հաշվի են առնում ուսանողների կարծիքը: Տեսնելով այս ամենը՝ ես չեմ զղջում Արցախում մնալու և կրթությունս մայր բուհում ստանալու համար:

***-Ունե՞ս սիրած լրագրող, որին կցանկանայիր նմանվել հետագա մասնագիտական գործունեությամբ:***

-Ես երկրպագում եմ Վլադիմիր Պոզներին: Նա ինձ համար իդեալական լրագրող է, հատկապես այն բանի համար, որ նա յուրաքանչյուր հարցում փորձում է լինել հայերի կողքին:

***-Ի՞նչ նպատակներ ունես կապված ապագա մասնագիտության հետ:***

-Կապված ապագա մասնագիտությանս հետ նպատակս մեկն է՝ աշխատել հեռուստատեսությունում որպես հաղորդավար և լուրեր վարել:

***-Ինչպիսի՞ն ես պատկերացնում քեզ մի քանի տարի անց: Որպես լրագրո՞ղ, թե՞...***

-Միանշանակ ես ինձ պատկերացնում եմ կայացած լրագրողի դերում, ումից կցանկանային օրինակ վերցնել շատերը:

***-Իսկ ի՞նչ նախասիրություններ ունես, ազատ ժամանակ ինչո՞վ ես զբաղվում:***

-Շատ եմ սիրում երգել ու նկարել, իսկ ազատ ժամանակ գրեթե չեմ էլ ունենում, քանի որ երկար ժամանակ եմ հատկացնում դասերիս:

***-Ի՞նչ կմաղթես համակուրսեցիներիդ և բոլոր առաջին կուրսեցիներին:***

-Բոլորին մաղթում եմ աշխատասիրություն ու նպատակասլացություն: Եթե հասել են այս երկուսին, ապա կարող են վստահ լինել, որ կկարողանան շարունակել իրենց ընտրած ուղին:

*Հարցազրույցը՝ Մանե Գաբրիելյանի,*
*լրագրություն 3-րդ կուրս*

# ԱրՊՀ ՈՒԳԸ ԵՎ ՈՒԽ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ՀԵՏ

***Արցախի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ), ուսանողական խորհրդի (ՈՒԽ) նախագահները հանդիպել են առաջին կուրսեցիների հետ և ուսանողներին ծանոթացրել դասընթացների բնույթին, գնահատման մեթոդաբանությանը, քննությունների անցկացման ընթացակարգին:***

Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Մանգասարյանը, ողջունելով առաջին կուրսեցիներին, ներկայացրել է ուսանողների իրավունքներն ու պարտականությունները, ուսումնական պլանը, մասնագիտությունները, որոնք, ըստ նրա, լայն պահանջարկ ունեն հանրապետության աշխատաշուկայում:

ՈՒԳԸ նախագահ Մարիամ Գևորգյանը մանրամասն ներկայացրել է ֆակուլտետի գործունեությունը, ուսանողական կյանքը, համալսարանի առավելությունները, ծանոթացրել մասնաշենքերին և լսարաններին, պայմաններին, պատմել արտասահմանում սովորելու հնարավորությունների մասին և տեղում պատասխանել բոլոր հետաքրքրող հարցերին:



# «ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԻ ԱՄԲՈՂՋ ԴԱՍ ՈՒ ՏԱՐԱԾՔ Է ԱՅՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՏԵՂ ԱՊՐՈՒՄ ԵՎ ՈՒՍԱՆՈՒՄ Է ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՈՒՆԴԸ»



***Ձեզ ենք ներկայացնում բնագիտական ֆակուլտետի աշխարհագրություն մասնագիտության առաջին կուրսի ուսանողուհի Լիանա Գասպարյանի հետ ունեցած մեր զրույցը.***

***-Լիանա, այս տարի Ձեր ընտանիքից միանգամից երեք ուսանող համալրեց մայր բուհի ուսանողության շարքերը՝ տարբեր մասնագիտական ուղղվածությամբ: Կպատմե՞ս այդ մասին:***

*-Այո, նշեմ, որ ռազմահայրենասիրական դաստիարակությունը մեր ընտանիքում կրթության կարևորագույն բաղադրիչներից է եղել: Եվ միայն այդ ոգով դաստիարակված սերունդը կարող է տեր կանգնել իր հայրենիքին: Եղբայրներս զինվորական ծառայության իրականացման պատճառով փոքր-ինչ ուշացումով համալրեցին մայր բուհի ուսանողության շարքերը: Եվ բոլորիս ուսանողական կյանքը մեկտեղվեց մեկ ուսումնական տարում: Դեռ մանկուց ես շնչել ու ապրել եմ Արցախի գողտրիկ բնության կախարդիչ գեղեցկություններով, իմ ծննդավայր Պատարայի բնաշխարհով: Արցախյան բնությունն ամբողջովին այն մասնագիտության արտացոլանքն է, որն ընտրել եմ սիրով՝ շնորհիվ իմ ուսուցչի, ով և մեծագույն նվիրումով իր մասնագիտական գիտելիքները հրամցրել է մեզ:*

***-Գիտեմ, որ դու ակտիվությամբ ու պատրաստակամորեն մասնակցել ես Պատարայում սպորտային տուրիզմի ֆեդերացիայի կողմից կազմակերպված միջազգային ճամբարներին: Կարելի է ասել, որ այդ մասնակցությունը քեզ համար ևս լույս է վառել դեպի կրթական նոր աշխարհ:***

*- Այո, դեռ 2014թ.-ից հետամուտ էի և սիրով մասնակցում էի ֆեդերացիայի կողմից կազմակերպվող բոլոր ճամբարներին: Դա իմ նախասիրությունն էր: Անչափ սիրելով և մոտ գտնվելով բնությանը՝ փորձեցի մի քանի քայլով ավելի մոտենալ աշխարհագրության «անատոմիային»...*

***-Նշանակում է, որ այն նպաստավոր ազդա՞կ էր նաև մասնագիտության ընտրության հարցում:***

*-Այո, բնաշխարհին հաղորդակից լինելը այս պարագայում դիտվեց որպես մարտահրավեր և ճակատագրական գործոն մասնագիտության ընտրության հարցում:*

***- Քո կարծիքով որքանո՞վ է հայրենասեր այսօրվա ուսանողը և որտե՞ղ է այն դրսևորվում:***

*- Հայրենասիրությունը վեհ գաղափար է: Այսօր էլ համալսարանականների համար հայրենասիրությունը չի ասոցացվում լոկ պատմական դասերի, ամփոփիչ ժամանակագրական տվյալների գեղարվեստական վերարտադրումներով: Հայրենասիրություն է մեր արցախյան տարեգրության պատմությունը, քառօրյա պատերազմը, որի բռունցքն ու վահանը ուսանողությունն էր: Մենք ունեցանք ուսանող հերոսներ, որոնց շնորհիվ որոշվեց ազգի ճակատագիրը: Հպարտության մի ամբողջ դաս ու տարածք է այն իրականությունը, որտեղ ապրում և ուսանում է անկախության սերունդը:*

***-Քո պատկերացրած ու արդեն իսկ իրականություն դարձած ուսանողական կյանքը որքանո՞վ են իրար մոտ ու համահունչ:***

*-Արդեն հասցրել եմ ճաշակել ուսանողական կյանքի քաղցրությունը: Վերջերս կայացած ներֆակուլտետային ինտելեկտուալ խաղ-մրցույթում համակուրսեցիներով արձանագրեցինք առաջին հաղթանակը: Մեծ պատասխանատվություն և աշխատասիրություն կպահանջվի ուսանողներիցս: Սպասելիքներս շատ են: Ընդհանուր առմամբ, ուսանողական կոլորիտը շատ խայտաբղետ է:*

***-Ի՞նչ քայլեր կարելի է ձեռնարկել կոնկրետ քո ընտրած մասնագիտական ոլորտում՝ այն ավելի լավը դարձնելու համար:***

*-Մեծ ուշադրություն դարձնել Արցախում տուրիզմի զարգացմանը, քանզի այն իր աշխարհագրական դիրքով զբոսաշրջության լայն գոտի է: Այն կխթանի նաև աշխարհագրության ոլորտի մասնագետների պահանջարկին, որն էլ իր հերթին կնպաստի նրա զարգացմանն ու մրցունակ լինելուն:*

***-Ունե՞ս նախընտրած բանաստեղծ, գրական հերոս կամ ստեղծագործություն:***

*-Ինչպես որ աշխարհագրությունը իմ արտաքին աշխարհն է, այնպես էլ գրականությունը՝ ներքինը: Պոեզիայի մեծ սիրահար եմ: Ստեղծագործություններից անգնահատելի է «Անլռելի զանգակատունը»: Գրական տրամադրությունս շիրազյան է, որտեղ ամբողջանում է մոր կերպարը:*

***-Քո կարծիքով ի՞նչի վրա են խարսխվում գիտական և ուսանողական կյանքի ճշմարիտ նվաճումները:***

*-Մեծ պատասխանատվության, նպատակների ճիշտ ուղղորդման և անդուլ աշխատանքի: Ահա ճշմարիտ նվաճումների յուրահատուկ բանաձևը:*

***-Քո մաղթանքը՝ ուսանողությանը:***

*-Շնորհավորում եմ բոլոր առաջին կուրսեցիներին գիտության ու դպրության նոր ուսումնական փուլի առթիվ, բոլոր ուսանողներին մաղթում եմ ուսման հանդեպ անհագ սեր ու նվիրում, կայացում:*

***ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝ Անահիտ ՀԱԿՈԲՅԱՆԻ***